8128

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«11» 05 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0080-23

Ձեռնարկողը՝ **«Էգիս Ինթերնեյշնլ» ընկերության հայաստանյան մասնաճյուղ**
ք. Երևան, Ջեյմս Բրայսի 19/1

Գործունեությունը՝ **Երևանի Իսակով - Արշակունյաց ճանապարհային հանգույցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**
Երևանի Կենտրոն, Շենգավիթ, Մալաթիա - Սեբաստիա վարչական շրջաններ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 12 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0080-23

<11> Նոյեմբեր **2023թ.**

Երևանի Իսակով - Արշակունյաց ճանապարհային հանգույցի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Էգիս Ինթերնեյշնլ» ընկերության հայաստանյան մասնաճյուղ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, Նախագծային փաստաթուղթ
Տեղադրման վայրը՝	Երևան քաղաքի Կենտրոն, Շենգավիթ, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններ

Ներածական մաս. Երևանի քաղաքապետարանը նախատեսում է Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցի կառուցումը որպես Երևանի՝ Իսակով-Լենինգրադյան գոյություն ունեցող ճանապարհահատվածի տրամաբանական շարունակություն, որը կապելու է Իսակովի և Արշակունյաց պողոտաները՝ բարելավելով քաղաքային տրանսպորտի համակարգը Երևանում: Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի (ՔԿԶՆԾ) Տրանշ 2. Իսակով – Արշակունյաց ճանապարհային հանգույցի իրականացումը ֆինանսավորվում է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից:

Նախատեսվող գործունեությունը՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Օրենքի 14-րդ հոդված, 5-րդ մասի, 3)-րդ կետի, ա. ենթակետի ենթակա է փորձաքննության որպես Բ Կատեգորիայի տեսակ՝ պայմանավորված Ծրագրով նախատեսված Հրազդան գետի վրայով 252 մ երկարությամբ և ավելի քան 28 մ երկարությամբ թռիչքներով ե/բ կամրջի կառուցմամբ:

Նախագիծը ներկայացված է մոտավորապես 6.6 կմ երկարությամբ (ներառյալ իջատեղերը) երկկողմանի երթևեկելի մասով, կենտրոնական բաժանիչ գոտիով և մայթերով, նոր ծրագծի վրա կառուցվող քաղաքային ճանապարհից (մոտ 2.0 կմ) և Հրազդան գետի վրայով անցնող 28 մ երկարությամբ երկաթբետոնե հեծաններով կամրջով: Ճանապարհը նախագծվում է որպես ներքաղաքային ճանապարհ/փողոց՝ 60 կմ/ժ առավելագույն արագությամբ:

Կառուցվող ճանապարհի ծրագիծը հիմնականում անցնելու է պետական և համայնքային, ինչպես նաև որոշակի հատվածում մասնավոր սեփականության հողամասերով, որոնց նպատակային և գործառնական նշանակություններն են՝ բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման, ընդհանուր օգտագործման, հասարակական և խառը կառուցապատման, գյուղատնտեսական՝ պտղատու այգիներ, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների և անտառային: Գործունեության համար դիտարկվել են այլընտրանքային տարբերակներ, առաջարկվող նախագծի դեպքում հաշվի է առնվել մի

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТНОЙ КОМИССИИ COMMISSION OF EXPERTS

շարք առավելություններ, որոնք թույլ կտան մեղմել շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությանը:

Նկարագրական մաս. Նախագծված Իսակով – Արշակունյաց ճանապարհային հանգույցը տեղակայված է Երևանի կենտրոնական և հարավ-արևմտյան հատվածում՝ Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջաններում (Երևանի կենտրոնից մոտ 3 կմ դեպի հարավ-արևմուտք): Գեոմորֆոլոգիական տեսակետից Ծրագրի տարածքը ընդգրկում է Քասախ-Եղվարդի հրաբխային սարավանդի հարավ-արևելյան եզրամասը և տարածվում է Հրազդան գետի աջափնյա և ձախափնյա՝ գետի կիրճին հարակից հովիտների վրա: Մակերեսը հիմնականում հարթ է, հարավ-արևելք ուղղությամբ ունի աննշան թեքություն (Իսակովի պողոտայի կողմից)՝ դեպի գետի հունը: Համաձայն ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքների՝ ծրագրի տարածքում վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական երևույթները բացակայում են: Հետազոտվող տեղամասը մտնում է սեյսմիկ 3-րդ գոտու մեջ՝ a=0.4g:

Նախագծված ճանապարհի շուրջ 1,2 կմ հատվածն անցնում է ոչ կառուցապատված տարածքներով, որոնք ծովի մակարդակից ընկած են 913,0-951,0 մետր բարձրությունների վրա և գտնվում են կիսաչոր լանդշաֆտային գոտում՝ համալրված Երևանի ողջ տարածքին բնորոշ բուսական և կենդանական աշխարհի տեսակներով:: Տարածքը հիմնականում ներկայացված է շագանակագույն հողերով՝ բուսաշերտի 0.2- 0.4 մ հզորությամբ: Ազդեցության ենթակա բուսահողի ծավալը տարածքում գնահատվել է 11100 մ^3:

Իսակովի հատվածը գտնվում է Կենտրոն վարչական շրջանում, մասամբ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում: Արշակունյացի հատվածը գտնվում է Շենգավիթ վարչական շրջանում՝ Երևանի հարավ-արևմտյան մասում: Այս հատվածը կսկսվի Արշակունյաց պողոտայից և շարունակվելով մոտ 170 մ, կհասնի Հրազդան գետի կամրջին: Հրազդան գետի կամրջի հատվածը /երկարությունը 252 մ է/ կսկսվի ՊԿ 1+70-ից և կավարտվի ՊԿ 4+22-ում: Նախագծով նախատեսված է ջրահավաք և ջրահեռացման համակարգեր՝ բոլոր տեսակի մակերեսային ջրերի հեռացման և դրանց մուտքը գրունտների մեջ կանխելու համար: Ճանապարհահատվածի հիմնական մասը կունենա 6 (3 x 2) երթևեկության գոտիներ, յուրաքանչյուրը՝ 3.30-3.75 մ լայնությամբ և կենտրոնական բաժանիչ գոտի՝ 4.00 մ լայնությամբ, որոշ հատվածներում այն կփոփոխվի: Ավարտված ճանապարհի մակարդակը կարող է հասնել գոյություն ունեցող մակարդակից մինչև 12.6 մ բարձր, միջինում բարձրությունը կազմելով մինչև 1 մ:

Ծրագիրը ներառում է հետևյալ բաղադրիչները.

- Իսակովի պողոտայի հանգույց՝ գոյություն ունեցող Իսակովի պողոտայի հանգույցը մասնակի կձևաձոխվի՝ դառնալով ամբողջական երեքնուկի տերև:
- Արշակունյաց պողոտայի օվալաձև հանգույց՝ Իսակով – Արշակունյաց ճանապարհային հատվածը և Արշակունյաց պողոտան միմյանց կապելու համար և ստորգետնյա անցումի կառուցում՝ Արշակունյաց պողոտայի երթևեկության հոսքերի համար:
- Նորագյուղ թաղամասի հանգույց՝ նախատեսված Էջմիածնի հին խճուղին և Իսակով – Արշակունյաց ճանապարհային հատվածը զրոյական մակարդակում միմյանց կապելու համար /հիմնական ճանապարհի համար կկառուցվի երկաթբետոնե թռիչքային կառուցվածք՝ վրայով անցնելու համար, իսկ Էջմիածնի հին խճուղին Նորագյուղի պողոտային կմիանա թռիչքային կառուցվածքի տակով/:
- 500 մմ տրամագծով նոր կոյուղատարի, նոր անձրևահեռների կառուցում /քանակը՝ 27 հատ/ և հետիոտնային ուղեանց՝ Արշակունյաց պողոտայում:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
02543163
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
RA ENVIRONMENTAL IMPACT EXPERT OPINION CENTER

Ճանապարհների և կամուրջների կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- գոյություն ունեցող շինությունների ապամոնտաժում, հանույթի/հողային աշխատանքների և լիցքի իրականացում,
- հաղորդուղիների տեղահանում՝ ներառյալ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերը,
- Հրազդան գետի վրայով 252 մ երկարությամբ նոր կամրջի կառուցում,
- երեքնուկի տերևի տեսքով օվալաձև հանգույցի, ուղեանցներ/մոտեցման իջատեղերի կառուցում,
- ասֆալտե ծածկի իրականացում,
- ջրահեռացման համակարգի կառուցում,
- արտաքին լուսավորություն, ճանապարհային նշանների տեղադրում, գծանշում, պաստառներ և արգելափակոցներ,
- աղմկապաշտպան պատնեշների կառուցում,
- կանաչապատում՝ ներառյալ ոռոգման համակարգի կառուցում:

Ճանապարհների կառուցման շինարարական աշխատանքների համար օգտագործվող նյութերն են՝ լիցքի նյութ /կոպիճ, ավազ, հողային և ժայռային հանույթ/, բետոն, ասֆալտ, մետաղական ամրաններ, մետաղական կառուցվածքներ, կցամասեր և այլ նյութեր (խողովակներ, լուսավորություն, պաստառներ և պողպատե արգելափակոցներ, ներկեր, քսանյութեր և այլն): Իսակովի հատվածի տեղանքում առակա են նաև որոշ քանակությամբ ժայռային հանված ապարներ, որոնք տեղադրվել են նախորդ ճանապարհաշինարարների կողմից, և լաբորատոր ստուգումներից հետո կարող են օգտագործվել լիցքի համար: Շինարարական բոլոր նյութերը նախատեսված են շինհրապարակ բերել պաշտոնապես գրանցված մատակարար կազմակերպություններից: Շինարարական աշխատանքների համար ջուրը կօգտագործվի տեխնոլոգիական (տոփանում) և բնապահպանական (փոշենստեցում) նպատակներով:

Ծրագիրը նախատեսում է մեծ ծավալով հողային աշխատանքների իրականացում՝ քարքարոտ վերին հողաշերտի մաքրում, բուսաշերտի առանձնացում, հողային հանույթ և գրունտի տեղափոխում: Հողային աշխատանք սկսելուց առաջ հողի վերին բերրի շերտը /որի ծավալը գնահատվել է 11100մ³/ հանվելու և պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող նորմերին համապատասխան: Ժամանակավոր կուտակումն իրականացվելու է ծրագրի օտարման գոտում կամ տեղական իշխանությունների/մասնավոր սեփականատիրոջ հետ համաձայնեցված տարածքներում, բացառելու նպատակով բուսահողի կորուստը և հետագայում օգտագործվելու է իրականացվելիք կանաչապատման աշխատանքների համար:

Պլանավորվում է իրականացնել ընդհանուր 115281.94մ³ հանույթ, ինչի տեղադրման համար նախատեսվում է անվտանգության ապահովման և ջրահեռացման համապատասխան տեխնիկական լուծումներ: Ըստ նախագծի՝ շինարարության համար անհրաժեշտ է լինելու 44678.07մ³ խիճ և 13365.39մ³ կոպճավազային խառնուրդ: Լիցքի համար անհրաժեշտ քարերը, կոպիճը, ավազը և այլ նյութեր, ինչպես նաև ասֆալտը և բետոնը գնվելու են շահագործվող հանքերից և գործարաններից:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած թափոնները կարող են ընդգրկել՝

- շինարարության համար ոչ պիտանի հող և ժայռային գրունտ,
- շինարարական թափոններ, այդ թվում՝ մետաղ, պլաստիկ, փայտի կտորներ, բետոնե ապամոնտաժված մասեր, մեքենաների անվադողեր և այլն:

ՀՀ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ РА
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER, RA
02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- հին ճանապարհային ծածկի հեռացումից առաջացած ասֆալտի թափոններ,
- հեղուկ թափոններ, այդ թվում՝ բետոնաջրի, յուղերի, վառելանյութերի, քսայուղերի մնացորդներ,
- կենցաղային թափոններ, շինարարական աղբ:

Բոլոր տսակի թափոնների կառավարումը կիրականացվի՝ համաձայն ՇՄԱԳ-ի Թափոնների կառավարման պլանով նախատեսված միջոցառումների: Շինարարության համար ոչ պիտանի նյութերը, ներառյալ՝ Իսակովի հատվածի տեղանքում ներկայում կուտակված թափոնները կտեղափոխվեն և կտեղադրվեն Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված թափոնավայրում:

Ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման աշխատանքները /ՇՄԱԳ/, հաշվետվության կազմումը և Բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) պատրաստումն իրականացվել են գործունեության ենթակա տարածքի վերաբերյալ տեղեկությունների և տվյալների, ինչպես նաև ուսումնասիրությունների հիման վրա: ՇՄԱԳ աշխատանքներում բացահայտվել են Ծրագրի ամբողջական և դրական, և բացասական ասպեկտները, ուսումնասիրվել և գնահատվել են Ծրագրի ազդեցությունները ֆիզիկական, կենսաբանական, սոցիալական, հնագիտական և մշակութային միջավայրի վրա և իրականացվել է մեղմացնող միջոցառումների և դրանց մոնիտորինգի պլանավորումը ԲԿՊ-ում /որը կցված է ՇՄԱԳ հաշվետվությանը/ Ծրագրի ամբողջ ընթացքում՝ սկսած մանրամասն նախագծից, նախաշինարարության փուլից մինչև շինարարություն, շահագործում և տեխնիկական սպասարկում:

Նախագծված ճանապարհի 0,35 կմ հատվածը քաղաքային կառուցապատված տարածք է, իսկ մոտ 1.2 կմ հատվածն անցնում է նախկինում գյուղատնտեսական նպատակով օգտագործված, իսկ ներկայումս լքված՝ մոլախոտերով և խոտով ծածկված տարածքներով: Հրազդան գետի ափամերձ տարածքում բուսականությունը փոխվում է, ներկայացված թփերով և մանր ծառերով (շուրջ 0,3 կմ երկարությամբ հատվածում): Բոլոր տարածքները հետազոտվել են «Կենդանական և բուսական աշխարհի հետազոտության» շրջանակում: Կենսաբազմազանության փորձագիտական հետազոտության իրականացման, ինչպես նաև շինարարական աշխատանքներին խոչընդոտող ծառերի տեսակներն ու քանակները որոշելու համար 2020 թվականի հոկտեմբերին իրականացվել է բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրություն: Ուսումնասիրության նպատակն է եղել պարզել կարևոր տեսակների հավանական առկայությունը դիտարկվող տարածքում: Կարմիր ցուցակում ընդգրկված, վտանգված և/կամ էնդեմիկ տեսակների առկայությունը որոշվել է հատուկ մեթոդաբանությամբ՝ բաժանելով տարածքը 2 հիմնական մասի՝ կիսաանապատային հարթավայրի և Հրազդան գետի ափամերձ հատվածի: Ընդհանուր՝ 415 ծառ և 67 թուփ ենթակա է հեռացման: Շինարարությանը խոչընդոտող կտրվող ծառերի և թփերի ցանկը, ըստ տեսակների և բների տրամագծերի, ներկայացված է ՇՄԱԳ-ի Հավելվածում: Արշակունյաց պողոտայի հատվածում գրանցվել է 120 ծառ, այդ թվում՝ 63 ծառ՝ Կոմիտասի անվան զբոսայգում: Իսակով - Նորագյուղ հատվածում գրանցվել է 40 ծառ, իսկ Հրազդանի կիրճում՝ 255: Ծառերի չափսերը խիստ տարբեր են՝ 3-4 սմ-ից (երիտասարդ ակացիաներ) մինչև 58-67 սմ (թեղի և սոսի): Ըստ հետազոտության արդյունքների՝ Ծրագրի տարածքում կարմիրգրքային տեսակներից աճում է սոսի արևելյանը (Platanus orientalis L.), որը Կարմիր գրքում նշված է որպես «վտանգված տեսակ»: Արշակունյաց պողոտայի եզրամասում հատվելու է այդ տեսակի 9 ծառ, իսկ Հրազդան գետի ափամերձ տարածքում՝ 10 ծառ: Նախնական ուսումնասիրությունների արդյունքների՝ Ծրագրի իրականացման տարածքում չկան հազվագյուտ էկոհամակարգեր, չեն հայտնաբերվել ՀՀ բույսերի Կարմիր գրքում

գրանցված այլ հազվագյուտ կամ Հայաստանի էնդեմիկ տեսակներ, որոնք ունեն ազգային պահպանման նշանակություն:

Ծառերի քանակը որոշվել է նախնական գնահատմամբ, սակայն դրանց թիվը կարող է կրճատվել շինարարական աշխատանքների ընթացքում՝ պայմանավորված կամրջի հենարանների կամ պատվանդանների և դրանց շուրջը կատարվող աշխատանքներով: Բուսականության մաքրման աշխատանքները սկսելուց առաջ հատվող ծառերի ու թփերի քանակը կվերահաշվարկվի կապալառուի կողմից և ծառերի կառավարման պլանը կթարմացվի: Մեղմացնող միջոցառումներ են առաջարկվել ԲԿՊ-ի Բուսական և կենդանական աշխարհի պահպանության և բուսականության մաքրման պլան բաժնում:

Կենդանական աշխարհի հետազոտության համաձայն՝ ցամաքային անողնաշարավորների մեջ չեն հայտնաբերվել Հայաստանի Կարմիր գրքում (2010) և ԲՊՄՄ վտանգված տեսակների Կարմիր ցանկում ներառված, ինչպես նաև պահպանության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող տեսակներ:

Կենսաբազմազանության վերաբերյալ փորձագետների մասնագիտական առաջարկությունները հաշվի են առնվել ԲԿՊ-ն պատրաստելիս: Ծրագրի համար իրականացված կենսաբազմազանության բոլոր հետազոտությունների եզրակացությունները ներառվել են մասնագիտական հաշվետվության մեջ: Հիմք ընդունելով կենսաբազմազանության հետազոտությունը՝ կարելի է եզրակացնել, որ ճանապարհի և կամրջի շինարարությունը էականորեն չի ձևափոխի և չի հանգեցնի խիստ կարևոր էկոհամակարգերի ոչնչացմանը, վտանգված կամ հազվագյուտ տեսակների անհետացմանը, սակայն կենսաբազմազանությունը կարող է կրել որոշակի բացասական ազդեցություններ ծրագրի իրականացման արդյունքում: Շինարարության ընթացքում Կապալառուն կներգրավի կենսաբազմազանության գծով մասնագետի՝ մտահոգության տեղիք տվող տարածքների և բնական միջավայրերի մասին խորհրդատվություն ստանալու նպատակով:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ծրագրի ազդեցության տարածքում ՀՀ կառավարության 14.08.2008 թ.-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N967-Ն որոշմամբ գրանցված բնության հուշարձաններ առկա չեն:

ՇՄԱԳ-ում ներկայացված հնագետի խորհրդատվության և հաշվետվության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ներառված հնագիտական վայրերը /այդ թվում՝ Հրազդան գետի կիրճի քարեդարյան հուշարձաններ՝ Երևան-1, Երևան-2 և Երևան-3 քարայր-կացարանները/ գտնվում են Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցի կառուցման շինարարական աշխատանքների գոտուց 60-80 մ հեռավորության վրա: Ծրագրի հարակից տարածքում առկա մշակութային և հնագիտական արժեքների վրա ցանկացած ազդեցության կանխման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները ներկայացված են ՇՄԱԳ/ԲԿՊ-ում: Մասնավորապես, նախատեսվում է հողային աշխատանքներն իրականացնել հնագետի հսկողությամբ:

Ճանապարհի նոր ծրագիծը պահանջում է Կոմիտասի անվան զբոսայգու՝ անմիջապես օտարման գոտում գտնվող պատերի, մետաղական ցանկապատերի և այուների մի մասի ապամոնտաժում, որոնց տեղադիրքը ներկայացված է ՇՄԱԳ-ում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ապամոնտաժել ներփակող ցանկապատի/պարսպի այն հատվածը, որն ընկնում է ճանապարհի անմիջական ազդեցության գոտում: Խնամքով ապամոնտաժման, բարելավման/պահպանության և վերաշարման մասով հատուկ միջոցառումներ են նախատեսվում նաև ԲԿՊ/Մշակութային ժառանգության կառավարման ենթապլանում:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Ծրագրի իրականացման ընթացքում մթնոլորտային օդի վրա ազդեցությունն առավել հավանական է շինարարության փուլում, պայմանավորված՝ հողային աշխատանքների արդյունքում առաջացած փոշու և գործող մեքենաների ու տեխնիկայի աշխատանքց առաջացած գազային արտանետումներով: Շինարարական աշխատանքների ընթացքում վնասակար նյութերի արտանետումներն առաջանալու են հանույթի, բեռնման աշխատանքների, ծածկի իրականացման, գծանշումների և սարքավորումների շահագործման հետևանքով:

Շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա կանխատեսվող արտանետումների ազդեցությունը գնահատելու համար իրականացվել է օդի որակի մոդելավորում՝ օգտագործելով «Էռա» համակարգչային ծրագիրը: ՇՄԱԳ-ում ներկայացվել է մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաները՝ ֆոնային տվյալներով և առանց ֆոնի: Մթնոլորտային արտանետումների ցրման հաշվարկի մոդելավորման արդյունքների համաձայն, Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցի կառուցման ժամանակ վնասակար նյութերի արտանետումների գետնամերձ կոնցենտրացիաները՝ հաշվի առնելով նաև մթնոլորտի ֆոնային աղտոտվածությունը, չեն գերազանցի Երևան քաղաքի համար սահմանված ՍԹԿ-երը: Առավելագույն գետնամերձ կոնցենտրացիան հնարավոր է SO_2-ի արտանետումից և կկազմի ՍԹԿ-ի 0.32 մասը:

Շինարարության ընթացքում օդի որակի պարամետրերին համապատասխանությունն ապահովելու համար ինչպես շինարարության, այնպես էլ թերությունների վերացման ժամանակահատվածում ԲԿՊ-ում նախատեսված է փոշու, ծծմբի երկօքսիդի (SO_2) և ազոտի երկօքսիդի (NO_2) արտանետումների պարբերական գործիքային չափումներ՝ մեկնարկից 21 օր առաջ՝ ելակետային տվյալների հավաքագրման նպատակով: Կապալառուն պատասխանատու կլինի իրականացնելու փոշու՝ 2.5 PM և 10 PM մասնիկների գործիքային կանոնավոր չափագրումներ (ամսական երկու անգամ)՝ համեմատելով դրանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգավորումների հետ, արդյունքների վերաբերյալ ներկայացվում է հաշվետվություններ: Փոշու չափագրումներն իրականացվելու են 3 ընտրված կետերում /խիտ բնակեցված տարածքներում/ աշխատանքային ժամերի ընթացքում, յուրաքանչյուր կետում առնվազն 3 անգամ, որի հիման վրա որոշվելու է միջին ցուցանիշը: Ծծմբի երկօքսիդի (SO_2) և ազոտի երկօքսիդի (NO_2) չափագրումները կիրականացվեն կապալառուի կողմից երկու անգամ: Շինարարության ընթացքում լրացուցիչ միջանկյալ չափագրումներ կիրականացվեն տեղի բնակիչների կողմից գրանցված բողոքների դեպքում:

Հետշինարարական փուլում փոշու, ածխաթթու գազի, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի մակարդակի ավելացումները նույնպես հնարավոր են: Շահագործման փուլի համար ազդեցությունը որոշվելու է օդի որակի մոդելավորման միջոցով և մեղմացվելու է նախագծով նախատեսված կանաչապատման միջոցառումների իրականացմամբ ու պատնեշների կառուցմամբ:

Ծրագրի իրականացման ողջ ընթացքում, նաև շահագործման փուլում անմիջապես հարակից տարածքում լինելու է աղմուկի և թրթռումների մակարդակի շարունակական բարձրացում, ինչի հիմնական աղբյուր է հանդիսանում շինարարական տեխնիկան; Նախագծման փուլում միջազգային մասնագետի ներգրավմամբ 2021 թ. հունվարի 1-19 իրականացվել են աղմուկի և թրթռումների հետազոտություններ, ուսումնասիրություններ, որոնց նպատակն է եղել գրանցել ելատեսային վիճակը և մոդելավորել ճանապարհի շահագործման ազդեցությունը: Արշակունյաց պողոտային մոտ գտնվող բնակելի տների համար, որտեղ ելակետային չափագրումների

արդյունքները գերազանցել են ընդունված նորմերը: Քանի որ մոդելավորման արդյունքներով սպասվում է գերազանցում աղմկապաշտպան պատնեշների կառուցման անհրաժեշտություն է առաջանում: Նախագծով նախատեսվում է ակուստիկ պատնեշների կառուցում: Աղմկապաշտպան պատնեշ տեղադրելու նպատակը աղուկն առնվազն 30 դԲ(A)-ով նվազեցնելն է:

Աղմուկի համար սահմանված սանիտարական նորմը ապահովելու համար ԲԿՊ-ում նախատեսված է ցերեկային ժամի աղմուկի միջին մակարդակի գործիքային չափագրումների վերաբերյալ պահանջը՝ ինչպես շինարարության, այնպես էլ թերությունների վերացման ժամանակահատվածի համար: Կապալառուն իրականացնելու է իր սեփական չափագրումները շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 21 օր առաջ: Նա պատասխանատու կլինի իրականացնելու գործիքային կանոնավոր չափագրումներ (ամսական երկու անգամ, ինչպես նաև բողոքներ ստանալու դեպքում):

Ծրագրի շրջանակում կդրսևորվի թրթռումների 2 տիպի ազդեցություններ՝ շինությունների և գույքի վրա, ազդակիր բնակչության առողջության վրա: Թրթռումների մակարդակի ուժգնությունը չափագրվել է ծրագծի երկայնքով 6 կետերում՝ ծրագրի մոտակայքում գտնվող բնակելի տան մոտ: Կատարված չափագրումների տվյալների հիման վրա մոդելավորման միջոցով որոշվել են դրանց հնարավոր ազդեցությունները շինարարական աշխատանքների ընթացքում շենք շինությունների վրա: Առաջարկվել են միջոցառումներ, որոնք ընդգրկվել են ԲԿՊ համապատասխան բաժիններում:

Ծրագրի ազդեցության գոտին ձգվում է մինչև բնական ջրային մարմին՝ Հրազդան գետը և արհեստական ջրային մարմին՝ ոռոգման ջրանցքը: Ջրային մարմինները կարող են ազդեցության ենթարկվել և՛ ջրառի, և՛ ջրի աղտոտման, և՛ նստվածքագոյացման տեսքով: Ազդեցությունը հավանական է գլխավորապես շինարարության փուլում: Հրազդան գետի վրայով նոր կամրջի թռիչքների կառուցումը կարող է հանգեցնել գետի ջրի, ինչպես նաև Ստորին Հրազդանի ոռոգման ջրանցքի աղտոտմանն ու նստվածքագոյացմանը: Գետի հունի փոփոխում կամ ջրի հոսքի նվազեցում նախատեսված չէ: Հնարավոր է ոռոգման ջրանցքի հունի ժամանակավոր փակում կամ փոփոխում: Առկա ջրային ռեսուրսները հավանական աղտոտումից և նստվածքագոյացումից զերծ պահելու նպատակով ԲԿՊ-ով նախատեսվում են հատուկ միջոցառումներ, այդ թվում՝ աղտոտման ելակետային տվյալների սահմանման նպատակով նմուշառման և վերլուծության իրականացում: Նախատեսվում է նաև ոռոգման սեզոնին ջրային մարմինների վրա ազդեցությունից խուսափելու և այն նվազեցնելու նպատակով միջոցառումների իրականացում:

Կառուցվող կամրջի համար ձևավորված շինհրապարակի տարածքում կնախատեսվի ջրահավաք և ջրահեռացման համակարգ՝ հնարավոր արտահոսքերից գետի աղտոտումը կանխելու նպատակով: Հաշվի առնելով կառուցվող ճանապարհին մեքենաների գնահատված քանակը՝ նախատեսվում է յուղի զատիչներով անձրևաջրերի մշակման համակարգեր՝ նպատակ ունենալով կանխել ջրային ռեսուրսների աղտոտումը նավթամթերքով և պինդ կախույթներով:

Հնարավոր է վառելանյութի, յուղի (հիդրավլիկ, փոխանցման տուփ, շարժիչ և այլն) քսանյութերի և այլ հեղուկ նյութերի և թափոնների արտահոսք կամ հոսակորուստ՝ ոչ պատշաճ կերպով պահեստավորված նյութերի, վերալիցքավորման կամ սպասարկող ծանր տեխնիկայից հասցված այլ պատճառներով: Սա կարող է աղտոտել գրունտը և ներթափանցել ստորգետնյա ջրեր: ԲԿՊ-ով նախատեսվում են կանխարգելող միջոցառումներ, այդ թվում՝ տեղում տեխնիկական սպասարկում իրականացնելուց և վերալիցքավորումից խուսափելու համար ձեռնարկվող միջոցներ:

ՀՀ ՇԵՆՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Կապալառուն կազմակերպելու է ճամբարի տարածքում նյութերի ժամանակավոր պահեստավորումը և մեքենաների կայանման ու վերանորոգման արհեստանոցների տարածքները: Ճամբարի տարածքում լինելու են մեքենաների լվացման օբյեկտներ և կեղտաջրերի հեռացման համակարգեր. առաջացած կեղտաջրերը ուղղվելու են տեղի ջրահեռացման համակարգ: Կայանման և վերալիցքավորման տարածքները լինելու են անջրաթափանց մակերեսի վրա: Պետք է բացառել կայանման վայրերը հողի ծածկույթի վրա, կամ խոտով և բուսականությամբ ծածկված վայրերում: Չի նախատեսվում բացել թափոնների հեռացման երկարաժամկետ գործածության համար նախատեսված կուտակավայրեր: Թափոնները տեղափոխել գոյություն ունեցող աղբավայրեր՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի հետ կնքված պայմանագիրը: Կապալառուն պետք է լիցենզիա ստանա վտանգավոր թափոնների մշակման համար կամ պայմանագիր կնքի մասնագիտացված լիցենզավորված ընկերության հետ:

Կապալառուն պատշաճ կերպով կկազմակերպի ամբողջ շինանյութի մատակարարումը և պահեստավորումը: Շինանյութը մատակարարվելու է ամենօրյա սպառման քանակներով՝ շինարարության տարածքում երկար ժամանակ մնալուց, շինհրապարակներում տարածվելուց և աղբի, փոշու և ցեխի աղբյուր դառնալուց խուսափելու համար:

Շինարարության ընթացքում կապալառուն համապատասխան մարմիններից ստանալու է բոլոր անհրաժեշտ օրենսդրական թույլտվությունները և լիցենզիաները թափոնների, այդ թվում՝ ասֆալտի թափոնների դասակարգման, փոխադրման, վերամշակման, հեռացման և տեղադրման համար:

Ծրագրի ամենազգայուն բաղադրիչը համարվում է սոցիալական միջավայրը և հնարավոր սոցիալական ազդեցությունները: Դրանք ներառում են շինարարական աշխատանքների ընթացքում, հետագայում՝ կառուցված ճանապարհի շահագործման ընթացքում համայնքին, տեղի բնակիչներին, և այլ ազդակիրներին պատճառված բացասական ազդեցություններ և/կամ անհանգստություն: Մարդկանց կենսակերպի վրա ազդեցությունները լինելու են ժամանակավոր: Տեղի բնակչությանը պատճառվող բացասական ազդեցություններից խուսափելուն, կանխելուն և/կամ մեղմելուն ուղղված միջոցառումները ներկայացված են ԲԿՊ-ում:

Մշակվել է աշխատանքի անվտանգության և առողջության ապահովման ենթապլան, որի նպատակն Ծրագրի իրականացան ընթացքում ապահովել ԱԶԲ-ի և ՀՀ օրենսդրության բոլոր պահանջներին համապատասխան շինհրապարակում գտնվելու իրավասություն ունեցող բոլոր անձանց առողջության, անվտանգության և բարեկեցության ապահովման մասին պահանջները:

Ծրագրի տարածքում ձևավորվող շինհրապարակը բոլոր աշխատակիցների համար կահավորվելու է ժամանակավոր սանիտարական հարմարություններով (զուգարան և լվացվելու, ճաշելու, սրճելու, հանգստանալու, ձմռանը տաքանալու հարմարություններ):

Ծրագրի ավարտից հետո, ինչպես նաև շինհրապարակի յուրաքանչյուր տեղամասում աշխատանքների ավարտի պահին, տարածքները պետք է մաքրվեն բոլոր շինարարական տեխնիկայից, նյութերից և մնացորդներից: Շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ կանաչապատման նախագծի և տեղամասի վերականգնման պլանի համաձայն իրականացվելու է տեղամասի վերականգնում՝ որպես ՇՄԱԳ/ԲԿՊ-ի մաս: Նախագծով նախատեսված է 47540 մ² մակերեսով տարածքի կանաչապատման աշխատանքներ, որից 24088 մ² մակերեսը ճիմապատվելու է, իսկ մնացած՝ 23452 մ²-ը ծածկվելու է հողաբուսաշերտով: Հողաբուսաշերտի պահանջվող քանակը գնահատված է 11726 մ³, որի մեծ մասը

կբավարարվի հողային աշխատանքնրի ընթացքում առաջացած և պահպանված 11100 մ3 ծավալով հողի բերրի շերտով, իսկ լրացուցիչ պահանջվող քանակը ձեռք կբերվի պայմանագրային հիմունքներով՝ գնման միջոցով: Ոռոգումը նախատեսված է Արշակունյաց պողոտայի և նախագծվող ճանապարհի խաչմերուկների ՊԿ 0+00 - ՊԿ2+40 հատվածներում (մինչև էստակադա): Այն կիրականացվի Փ 50 պոլիեթիլենային խողովակով ջրման ծորակներից: Ոռոգման աղբյուր է հանդիսանում գոյություն ունեցող քաղաքային ոռոգման ցանցը՝ ՅԱՔ6-4-10-Q=1.4 լ/վրկ:

Կապալառուն հատված ծառերի/թփերի փոխարեն պետք է տնկի նորերը: Ծառերը տնկվելու են 1:6 հարաբերակցությամբ ընդհանուր սկզբունքով (6 ծառ/թուփ մեկ հատված ծառի/թփի դիմաց): Հատուկ կանոններ են գործելու կենսաբազմազանության (բույսերի) հետազոտության արդյունքում հայտնաբերված կարմիրգրքային Սոսու արևելյան [Platanus orientalis] դեպքում, ինչպես նաև ծառերի հատումից հասցվող վնասի հաշվարկում նշված արժեքավոր և հազվագյուտ տեսակների նկատմամբ, որի դեպքում կտրված ծառերը փոխարինվելու են նորերով՝ 1:12 հարաբերակցությամբ: Ծառերը/թփերը տնկվելու են համաձայն՝ ԵՔ-ի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի՝ համապատասխան վարչական շրջանների հետ համաձայնեցված վայրերում՝ ըստ ԲԿՊ-ի Ծառերի կառավարման պլանի:

Ընդհանուր առմամբ ծրագրի շրջանակում տնկվելու է 2789 ծառ և թուփ, որից 765 ծառը և 67 թուփը կանաչապատման նախագծով տնկվելու են ճանապարհամերձ հատվածներում, իսկ մնացած քանակությունը կտնկվի Երևանի քաղաքապետարանի կողմից լրացուցիչ հատկացված և համապատասխան վարչական շրջանի հետ համաձայնեցված տարածքներում /ըստ վարչական շրջանների կանաչապատվող մակերեսները կկազմեն՝ Կենտրոն - 30100 մ^2, Շենգավիթ - 5890 մ^2, Մալաթիա-Սեբաստիա - 11550 մ^2/: Կանաչապատման նպատակով ընտրվելու են էկոլոգիապես առավել կայուն ծառատեսակներ, որոնք համապատասխանում են ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին:

ԱԶԲ-ի բնապահպանական անվտանգության վերաբերյալ պահանջներին և շրջակա միջավայրի պահպանության մասին ՀՀ օրենսդրական պահանջներին և ստանդարտներին համապատասխանությունը ապահովելու նպատակով մշակվել է Բնապահպանական կառավարման պլան: Այն նկարագրում է բնապահպանական և սոցիալական պահանջների և պայմանների մասով ծրագրային բոլոր պարտավորությունները: ԲԿՊ-ն իր մեջ ներառում է Ծրագրի իրականացման ընթացքում ծագած ցանկացած անցանկալի ազդեցությունից խուսափելուն, իսկ անհնարինության դեպքում՝ բնապահպանական պլանավորման և կառավարման միջոցով բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն, մեղմացնելուն և/կամ հավասարակշռելուն, ինչպես նաև դրական ազդեցությունները ընդլայնելուն ուղղված միջոցառումները:

ԲԿՊ-ի շրջանակներում իրականացվող մոնիտորինգի համակարգը նախատեսված է ստուգելու ծրագրի գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը և ԱԶԲ-ի ստանդարտներին և կանոնակարգերին: Մոնիթորինգի համակարգում ներկայացված պահանջները վերաբերում են՝

- շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիտորինգին՝ օդի որակի, ջրի որակի և աղմուկի և թրթռման գործիքային չափումների միջոցով (գործիքային մոնիտորինգ),
- շրջակա միջավայրի մոնիտորինգին՝ ստուգելու շինարարական աշխատանքների համապատասխանությունը մեղմացնող միջոցառումներին, որոնք սահմանված են ԲԿՊ-ում կանոնավոր այցելությունների միջոցով (ակնադիտական մոնիտորինգ): Մոնիթորինգն իրականացվելու է ինչպես շինարարական

աշխատանքների փուլում, այնպես էլ հետշինարարական փուլում՝ թերությունների վերացման ժամանակաշրջանում: Մոնիտորինգի իրականացման օբյեկտներ են՝ շինհրապարակը, ճամբարի տարածքը, լցակույտը,բնակելի տարածքները և այլն):

ՇՄԱԳ-ում իրականացվել է գործունեության իրականացման արդյունքում /շինարարության փուլում/ շրջակա միջավայրին հասցվող հնարավոր տնտեսական վնասի հաշվարկ, ինչը կազմում է 208283938 ՀՀ դրամ; Գնահատվել է ծառերի/թփերի հատման հետևանքով բնությանը հասցվող վնասը /համաձայն հաշվեգնահատման այն կազմում է 6,296,000 ՀՀ դրամ/: Վնասի փոխհատուցումը հատուցման վճարների տեսքով իրականացվելու է օրենքով սահմանված կարգով և վնասի փոխհատուցման միջոցառումների տեսքով:

Ֆլորայի և ֆաունայի պահպանության պլանի իրականացումը ստուգելու նպատակով իրականացվելու է Կենսաբազմազանության մոնիթորինգ, որի նպատակով Կապալառուն վարձելու է համապատասխան մասնագետներ՝ մեկ բուսաբան և մեկ կենդանաբան: Մասնագետների կողմից իրականացվելու է նախաշինարարական ելակետային վիճակի մոնիթորինգ, որի ընթացքում անհրաժեշտություն առաջանալու պարագայում աշխատանքների անմիջական գոտում հայտնաբերված կենդանիները կտեղափոխվեն իրենց համար անվտանգ միջավայր: Այնուհետև պարբերաբար կիրականացվի ամսեկան ստուգայցեր, որոնց արդյունքներն ամփոփվելու և ներկայացվելու են Կապալառուի ամսեկան բնապահպանական հաշվետվության մեջ: Շինարարական աշխատանքների և ճանապարհի հետագա շահագործման փուլերի համար ծրագրի իրականացման տարածքում հանդիպող կենդանիների պահպանության համար առաջարկվել են միջոցառումներ և տեխնիկական լուծումներ, որոնք հաշվի են առնվել նախագծում: Մասնավորապես, փոքր կաթնասունների համար ճամփեզրին՝ յուրաքանչյուր 1-2 կմ-ի վրա նախատեսված է տեղադրել 50 սմ տրամագծով խողովակներ, որոնց միջոցով կենդանիները կտեղաշարժվեն:

Պատճառաբանական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի Շենգավիթ վարչական շրջանում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Քննարկման ընթացքում բարձրացվել են հարցեր, կապված՝ կանաչապատման մակերեսների և աշխատանքների, օտարվող տարածքների գործընթացների և հասցվող վնասների փոխհատուցման վերաբերյալ, որոնց տրվել են հիմնավոր պատասխաններ: Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ փորձաքննական գործընթացում շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, ինչպես նաև առողջապահության, արտակարգ իրավիճակների, ԿԳՄՄ նախարարություններից, կադաստրի կոմիտեից և Երևանի քաղաքապետարանի կողմից ստացված կարծիքները, առաջարկությունները և դիտողությունները ևս հաշվի են առնվել ՇՄԱԳ-ի լրամշակումներում:

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները՝ հարկ է նշել, որ Երևանի Իսակով - Արշակունյաց ճանապարհային հանգույցի կառուցումը՝ որպես ներդրումային Ծրագրի Տրանշ 2 Ճանապարհային հանգույցում ներառված ճանապարհահատված, Երևանի կենտրոնը կբեռնաթափվի երթևեկությունից՝ զգալիորեն կրճատելով ուղևորա-բեռնափոխադրումների ժամանակը և խցանումները: Ծրագիրը մշակվել է տնտեսապես արդյունավետ քաղաքային տրանսպորտի համակարգի ստեղծմանը և երթևեկությանը խթանելու նպատակով՝ երթուղու և արդյունավետ շրջանցիկ ճանապարհի կառուցման միջոցով:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑԻՈՆ ԾԱՌԱՅ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТНОЙ
COMMISSION
OF EXPERTS

Շինարարության ընթացքում ճանապարհի հարևանությամբ մոտակա բնակելի տարածքները ժամանակավոր կենթարկվեն բացասական ազդեցությունների (փոշու արտանետումներ, աղմուկ, ճանապարհների անհասանելիություն և այլն), սակայն դրանք կլինեն կարճաժամկետ և ՇՄԱԳ հաշվետվության ԲԿՊ-ում նախատեսված միջոցառումների, մասնավորապես՝ մշտադիտարկումների իրականացման արդյունքում կլինեն վերահսկելի և կառավարելի:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները (ներառյալ ջրօգտագործումը, ջրահեռացումը, հողերի գործառնական նշանակության փոփոխությունը, գոյություն ունեցող ենթակառուցվածքների տեղափոխումը, թափոնների, այդ թվում ասֆալտի, հեռացումը, վերամշակումը, տեղադրումը և այլն):
2. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ղեկավարվել առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն և 2002 թվականի մարտի 6-ի թիվ 138 հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:
3. Գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝ «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի (2000թ.), «Բուսական աշխարհի մասին» ՀՀ (1999թ) օրենքի պահանջներով, ինչպես նաև՝ ՀՀ կառավարության՝ 14.08.2008թ. N 967-Ն, 31.07.2014թ. N781-Ն 29.01.2010թ. <<ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին>> N71-Ն և N72-Ն որոշումների պահանջներով:
4. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
5. Ճանապարհի ազդեցության գոտում գտնվող՝ Կոմիտասի անվան զբոսայգու մետաղական ցանկապատերի, սյուների ապամոնտաժման և վերաշարման աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ մշակույթի նախարարության գործառույթներին և ընթացակարգերին համապատասխան:
6. Շինարարական հրապարակների տեղադրման, բուսաշերտի ժամանակավոր պահեստավորման, հանվող գրունտի և շինարարական աղբի հեռացման տարածքները և վայրերը սահմանել ու նախատեսել Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ղեկավարների կողմից տրված համապատասխան համաձայնեցումների հիման վրա:
7. Բերրի հողի կտրումը, պահեստավորումը, պահպանումը, հետագա օգտագործումը, կամ վաճառքը իրականացնել ՀՀ կառավարության 2017 թ. նոյեմբերի 2-ի N 1404-ն, 2011 թվականի սեպտեմբերի 8-ի N 1396-Ն որոշումների և 2021 թվականի ապրիլի 29-ի Շինարարական աշխատանքներ կատարելու հետևանքով հանված հողի բերրի շերտի վաճառքի կարգը սահմանելու մասին N676-Ն որոշման պահանջներին համապատասխան:
8. Անհրաժեշտ է մշակել Կանաչապատման, բարեկարգման և ոռոգման նախագիծ՝ համաձայնեցնելով այն Երևանի քաղաքապետարանի հետ:

աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի մասնագետների հետ համաձայնեցված /պահպանելով 3-5 տարի խնամքի և կպչողականության ապահովման միջոցառումները/:

9. Շինարարության ընթացքում անհրաժեշտ է ապահովել ԲԿՊ-ում և բնապահպանական մոնիթորինգի պլանում առաջարկվող միջոցառումների և մոնիթորինգային դիտարկումների իրականացումը և ժամանակացույցերը, որոնց արդյունքները պետք է հասանելի լինեն պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Էգիս Ինթերնեյշնլ» ընկերության հայաստանյան մասնաճյուղի կողմից փորձաքննության ներկայացված Երևանի Իսակով - Արշակունյաց ճանապարհային հանգույցի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետը՝ Հ. Եղիքնազ Մկրտչյան